

# ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԸ՝ ՇԱՐԱԿԱՆԱԳԻՐ ԵՒ ՏԱՂԱՍԱՑ

ԱՆՆԱ ԱՐԵՒՇԱՏԵԱՆ  
anna-arevchatyan@hotmail.com

Բազրատունեաց Հարստութեան շրջանի հայ մշակոյթի փայլուն ներկայացուցիչներից է Գրիգոր Մագիստրոս Պահլաւունին (980-1058), որի գեղարուեստական ժառանգութիւնը շարունակում է գրաւել ուսումնասիրողներին: Նա եղել է Անիի մշակութային մթնոլորտի վրայ ներազդած այն գործիչներից, որոնք հանդիսացել են զարգացած աւատատիրութեան շրջանը բնորոշող նոր մտաւոր հոսանքի արտայայտիչները:

Մագիստրոսի բազմակողմանի ստեղծագործական գործունէութիւնն ընդգրկում էր նաեւ երաժշտական արուեստը: Նա յայտնի է եղել իրրեւ շարականագիր եւ տաղասաց: Յաւոք, այդ մասին վկայող տուեալները չափազանց քիչ են: Սակայն Մագիստրոսի նամականիում եւ Մեկնութիւն Քերականի երկասիրութեան մէջ առկայ երաժշտութեանը վերաբերող ասոյթները հաւաստում են թէ՛ վանքերում աւանդուող եւ զարգացող հոգեւոր երգարուեստի, թէ՛ երաժշտութեան տեսութեանն ու գեղագիտութեանը եւ թէ՛ իր ժամանակուայ գուսանական արուեստի կենդանի գործառոյթին նրա քաջատեղեակ եւ նախանձախնդիր լինելը: Ուստի հետազօտական չափազանց գրաւիչ խնդիր է Մագիստրոսի սեփական երաժշտական յորինումների հարցը: Արդէն այն փաստը, որ Մագիստրոսը յիշատակուել է շարականագիրների միջնադարեան ցուցակներում, ինքնին ուշագրաւ է: Եկեղեցին բացառիկ դէպքերում է կանոնակարգել աշխարհիկ հեղինակների ստեղծած հոգեւոր երգերը<sup>1</sup>: Ահա այդ հագուագիւտ դէպքերից է Մագիստրոսին վերագրուող *Խաչի նաւակատեաց Ե. օրուայ «Չորս Ըստ Պատկերի Քում» ԳՁ* ողորմեան: Բոլոր ցուցակների կազմողները (բացառութեամբ այն հեղինակների, որոնք չեն անդրադարձել այդ շարականին, ինչպէս Սարգիս Երէցը եւ ԺԵ. դարի մատենագիր Առաքել Սիւնեցին) համակարծիք են տուեալ շարականի հեղինակի հարցում, ինչպէս, օրինակ, մատենագիր Գրիգոր Տաթեւացին (1346-1410). «գՉորս ըստ պատկերին՝ Գրիգոր Մագիստրոսն»<sup>2</sup>, Ստեփանոս Զիգ Զուղայեցին. «Գրիգոր Մագիստրն զԸստ պատկերին»<sup>3</sup>, Յակոբ Սսեցին. «Խաչ կենարըն՝ Մագիստրոս, Չորս

ըստ պատկեր նորա ի հոս»<sup>4</sup>, Անանունը. «Գրիգոր Մագիստրոսն՝ զՉորս ըստ պատկերին, գոր այլք Իսահակայ Չորսփորեցոյ տան»<sup>5</sup>: Իսկ Յովհաննէս Վանականն իր Հարցմունք Եւ Պատասխանիքում անդրադարձել է այդ շարականին առանձին պարբերութեամբ, այսպէս. «Հարց. Չորս ըստ պատկերի [ո՞] ստեղծեր: Պատասխան. Մագիստրոս Գրիգոր (...)»<sup>6</sup>:

Չնայած դրան, շարականագիտութեան մէջ եղել է նաեւ այլ տեսակէտ, ըստ որի, տուեալ շարականը ոչ թէ Մագիստրոսի, այլ է. դարի իշխան Աշոտ Պատրիկ Բագրատունու գործն է<sup>7</sup>: Այս խնդրին տարիներ առաջ անդրադարձել ենք առանձին յօդուածով, որի մէջ համոզիչ փաստարկներ ենք բերել սոյն շարականի հեղինակային պատկանելիութեան վերաբերեալ, յօգուտ՝ Մագիստրոսի, ներկայացնելով նաեւ Ամենափրկիչ կոչուող բիւզանդական սրբապատկերի Հայաստան տեղափոխելու ողջ պատմութիւնը, Հաւուց Թառի վանական համալիրի վերակառուցման, վերաշինուած եկեղեցու նաւակատիքի առիթով խնդրոյ առարկայ շարականի յօրինուած լինելու հանգամանքը, տուեալ եկեղեցու յայտնի արձանագրութեան մեկնարանման հարցին նուիրուած պատմիչների եւ բանասէր-պատմաբան հայագէտներ՝ Կարապետ Կոստանեանցի, Գարեգին կաթողիկոս Յովսէփեանցի եւ այլոց աշխատութիւնների քննական տեսութիւնը<sup>8</sup>:

Շարականագիրների միջնադարեան ցուցակներից արուած մէջբերումներում ուշադրութիւն է գրաւում Յակոբ Սսեցու չափածոյի այն հատուածը, որտեղ բացի «Չորս Ըստ Պատկերի Քում» շարականից, Մագիստրոսին է վերագրուում նաեւ Խաչի նաւակատեաց Գ. օրուայ «Խաչն Կենարար» շարականը: Այդ վկայութիւնը հաստատուում է ձեռագրական մի շարք տուեալներով:

Շարականագիրների ցուցակների հանդէպ ունեցած մեր վստահութիւնը՝ նաեւ այլ առիթներով արդարացուած<sup>9</sup>, մղեց մեզ նոր պրպտումների, որոնց նպատակն էր (բացի վերոնշեալ երկու երգասացութիւններից) Շարակնոցում տեղ գտած Մագիստրոսի կանոնակարգուած կամ պարականոն երգասացութիւնների որոնումը այլ ձեռագրական աղբիւրներում: Այսպէս, Հայր Միքայէլ Չամչեանը, ձեռքի տակ ունենալով Վանական Վարդապետի Հարցմունք Եւ Պատասխանիքի մէկ այլ տարբերակ, մէջբերել է Մագիստրոսին վերաբերող հատուածը յաւելեալ տեղեկութիւններով համալրուած, որոնք համաձայնեցւում են մեզ ծանօթ ուրիշ աղբիւրի հետ: Չամչեանի տրամադրութեան տակ եղած ձեռագիրը Մագիստրոսին է վերագրում Խաչի նաւակատեաց Ե. օրուայ կանոնի

տէր երկնիցը եւս, այսպէս՝ «...շարական. Չորս ըստ պատկերի քում. եւ զտէր երկնիցն. Որ զարդարեաց»<sup>10</sup>: Բացի Վանական Վարդապետի բերած խօսուն վկայութիւնից, որը մինչեւ այժմ վրիպել է երաժշտագէտների ուշադրութիւնից, մեզ յաջողուեց յաւելեալ մատենագրական տուեալներ յայտնաբերել, որոնք թէեւ նոյնպէս հրատարակուած են, սակայն աննկատ են մնացել: Օրինակ, Չմմառի վանքի Մատենադարանի թիւ 71 Շարականոցն ուշագրաւ է շարականների հեղինակներին վերաբերող իր լուսանցագրերով: Այստեղ Խաչի նաւակատեաց Ե. օրուայ կանոնի դիմաց կարդում ենք. «Խաչի նաւակատեաց Ե. աւուրն հարց՝ Այսօր պայծառ եւ սիւն լուսոյ - զհարցս իւր սարաւքն Մագիստրոս ի պատիւ Դարունից եկեղեցւոյ»<sup>11</sup>: Արդեօք ի՞նչ նկատի ունէր միջնադարեան գրիչը «իւր սարաւքն» ասելով: Խաչի նաւակատեաց Ե. օրուայ կանոնի կազմը հետեւեալն է.

Օրհ. - Չափաւոր-ծանր. «Ուրախ Լեր Սուրբ Եկեղեցի»: Է. դ. կաթողիկոս Սահակ Չորափորեցուն վերագրուող յայտնի շարականն է: Կանոնի յաջորդ մասերը, ըստ վերոյիշեալ ձեռագրի, ընծայուած են Մագիստրոսին՝ հարց - ծանր. «Այսօր Պայծառ Ու Սիւն Լուսոյ» (5 տուն), ողորմեա - չափաւոր. «Չորս Ըստ Պատկերի Քում» (4 տուն), տէր երկնից - միջակ-չափաւոր. «Որ Չարդարեաց Մեծապայծառ Փառօք» (3 տուն), մանկունք - չափաւոր. «Այսօր Ուրախացեալ Յընծան Երկնից» (3 տուն): Այս համատեքստում միանգամայն հասկանալի է դառնում անանուն խմբագրութեան շարականագիրների ցուցակի «Չոր Այլք Իսահակայ Չորափորեցւոյ Տան» արտայայտութիւնը<sup>12</sup>:

Պակաս ուշագրաւ չէ Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան Մատենադարանի թիւ 202, 1312 թուականի Շարականոցը, որը հնագոյնն է տուեալ հաւաքածոյում եւ օժտուած է «ամէն շարականի հեղինակաց անուններով»<sup>13</sup>: Այստեղ կարդում ենք. «Կանովն սրբոյ խաչին Դ. աւուրն. Խաչին կենարար որ եղեւ մեզ փրկութիւն՝ Գրիգորի Մագիստրոսի ասացեալ»: Մեր կարծիքով, «Խաչն Կենարար» շարականի հետ կապուած պնդումը կարելի է կատարել Մագիստրոսի «Ներբողեան Ի Սուրբ Խաչն Քրիստոսընկալ» եւ «Յաղագս Խաչանման Գաւազանին»<sup>14</sup> քերթուածների բովանդակութիւնն ու ոճական առանձնայատկութիւնները նկատի ունենալով, ինչը մինչ այժմ անտեսուել է ուսումնասիրողների կողմից<sup>15</sup>: Հետեւաբար, շարականագիրների ցուցակներում, որոնք որոշ իմաստով նոյնպէս կանոնական մի վաւերագիր-յիշատակարան էին ներկայացնում, Մագիստրոսի անուան յիշատակութիւնը սխալմունք չէ: Նա հանդէս է գալիս որպէս առնուազն հինգ շարականի հեղինակ՝

ներկայացնելով Անիի մշակութային մթնոլորտից սերած շարականագիրները շրջանակը:

Ինչ վերաբերում է Մագիստրոսի անունով գրչագիր Գանձարաններում պահպանուած տաղերին, ապա նշելի է Յովհաննէս Մկրտչին նուիրուած «Կարապետ Սուրբ Հաւատոյ» խաղագիր տաղը, որն օժտուած է «Կարապետին տաղ» ակրոստիքոսով: Ինչպէս ենթադրում է Չամչեանը, հիմնուելով ԺԱ. դարի մատենագիր Արիստակէս Լաստիվերտցու, Ներսէս Շնորհալի կաթողիկոսի (1098-1173) եւ Վարդան Արեւելցու հաղորդած տեղեկութիւնների վրայ, տաղը, հաւանաբար, յօրինուել է Սուրբ Կարապետի գանգակատան կառուցման առիթով<sup>16</sup>: Մեզ ծանօթ գրչագրերից երեքի մէջ հեղինակի մասին կան շատ որոշակի ցուցումներ, այսպէս. «Տաղ Յովանու ի Գրիգորէ Մագիստրոսէ»<sup>17</sup>, «Տաղ ի Մագիստրոս իշխանէ եւ պարօն Գրիգորէ»<sup>18</sup> եւ «Տաղ ի Մագիստրոսէ»<sup>19</sup> ձեւերով: Յաւօք, տաղի մեղեդիական բաղկացուցիչը գանձարանային բազմաթիւ այլ երաժշտաբանաստեղծական միաւորների նման չի հասել մեր օրերին:

Վերջերս մեզ վիճակուեց ի յայտ բերել Մագիստրոսի անունով պահպանուած եւս մէկ տաղ, որը ժամանակին գետեղել էր իր «Նուագարան Երաժշտական» վերնագիրը կրող տաղարանում Գրիգոր Դպիր Գապասակալեանը<sup>20</sup>: Դա «Կանայք ոմանք եկին՝ ի մեծ Զատկին» սկզբնատողով օժտուած Յարութեան տաղն է, որը Գապասակալեանն, ամենայն հաւանականութեամբ, ընդօրինակել է միջնադարեան խաղագիր մի Գանձարանից կամ Տաղարանից: Նուագարան Երաժշտականում տաղը բերուած է հետեւեալ խորագրով. «Տաղ Յարութեան՝ ի Գրիգոր Մագիստրոսէ»<sup>21</sup>: Քերթուածն ունի երեք տուն եւ գրուած է խառը տաղաչափութեամբ (6+4), (4+6), (4+4), (4+4), (4+4): Երեք տեղ առանձին բառերի (Մարիամ, Սողովմէի, դըրացիք) վրայ կան խազեր:

Այսպիսով, ներկայումս Մագիստրոսի՝ որպէս շարականագրի եւ տաղասացի մասին մեր պատկերացումները գնալով յստականում են, աւելին՝ նաեւ ընդլայնում, հաւաստելով, որ Մագիստրոսը, որն իր ժամանակի ուսեալ եւ բազմակողմանիօրէն զարգացած մտաւորականներից էր, եղել է ոչ միայն քաղաքական գործիչ, գիտնական, մանկավարժ եւ բանաստեղծ, այլ նաեւ տաղանդաւոր երաժիշտ-երգահան: Այդ մասին են վկայում Շարակնոցում տեղ գտած եւ եկեղեցու կողմից կանոնակարգուած նրա հինգ շարականները, որոնք հաւաստում են Մագիստրոսի ազգային շարականերգութեան նախորդող շրջանների հիանալի իմացութիւնը ինչպէս աստուածաբանութեան, այնպէս էլ՝ աստ-

ուածաշնչական պոէտիկայի, գուտ բանաստեղծական, տաղաչափական հնարանքների եւ եկեղեցական երգարուեստի տեսական եւ գործնական ոլորտներին հմուտ տիրապետման տեսանկիւնից: Ուստի՝ միանգամայն հասկանալի է նրա նամակներում եւ *Մեկնութիւն Քերականի*ում այդքան լայն եւ նախանձախնդիր անդրադարձը իրեն ժամանակակից երաժշտարուեստի (ինչպէս հոգեւոր, այնպէս էլ՝ աշխարհիկ), նաեւ հեռաւոր անցեալի, յատկապէս հելլենական երաժշտական մշակոյթի այլեւայլ հարցերին ու կողմերին:

Ուրեմն, Մագիստրոս-երգահանի վաստակն առայժմ ներկայանում է հետեւեալ տեսքով.-

Կանոն *Խաչի Նաւակատեաց Ե. աւուրն*

ԳԶ

Հարց - Ծանր. «Այսօր Պայծառ Եւ Սիւն Լուսոյ»

Ողորմեա - Չափաւոր. «Զորս Ըստ Պատկերի Քում»

Տէր երկնից - Միջակ-Չափաւոր. «Որ Զարդարեաց Մեծապայծառ Փառօք»

Մանկունք - Չափաւոր. «Այսօր Ուրախացեալ Յնծան Երկնից»

Կանոն *Խաչի Նաւակատեաց Դ. աւուրն*

ԲԿ

Օրհնութիւն Ա. - Չափաւոր. «Խաչն Կենարար Որ Եղեւ Մեզ Փրկութիւն»

Տաղ Յովաննու ի Գրիգորէ Մագիստրոսէ

«Կարապետ Սուրբ Հաւատոյ»

Տաղ Յարութեան ի Գրիգորէ Մագիստրոսէ

«Կանայք Ոմանք Եկին Ի Մեծ Զատկին»

Ընդամէնը եօթ միաւոր՝ հինգ շարական եւ երկու տաղ, ինչն ամէնեւին էլ քիչ չէ, եթէ նկատի ունենանք, որ *Շարակնոց*ում կան մէկական շարականով ներկայացուած նշանաւոր հեղինակներ, ինչպիսիք են, օրինակ, իշխանուհի Խոսրովիդուխտ Գողթնեցին՝ «Զարմանալի է ինձ», մոկացի եպիսկոպոս՝ Ստեփաննոս Ապարանցին՝ «Սրբութիւն Սրբոց», կաթողիկոս Սարգիս Ա. Սեւանեցին՝ «Սարսափելի Որոտմամբ», Յակոբ վարդապետ Սանահնեցին՝ «Յանսկզբնական Մոցոյ Հօր»<sup>22</sup> եւն.:

Գրիգոր Մագիստրոսի գիտական լայն ընդգրկումների մասին են վկայում նրա գեղագիտական հայեացքներն եւ երաժշտա-բանաստեղ-

ծական ժանրերի նրա տեսութիւնը, որոնք առանձին հետաքրքրութիւն են ներկայացնում: Մագիստրոսի գեղագիտական հայեացքները գրաւել են դեռեւս Նիկողայոս Ադոնցի<sup>23</sup> ուշադրութիւնը եւ դա լիովին արդարացուած է, քանի որ իր նամականիում եւ *Մեկնութիւն Քերականի* երկասիրութեան մէջ Մագիստրոսը հանդէս է գալիս իրրեւ հին եւ նոր (իրեն ժամանակակից) երաժշտարուեստի խորաթափանց գիտակ, որն ունի սեփական որոշակի դիրքորոշումն ու գործուն վերաբերմունքը իր ժամանակի մտաւորականներին յուզող մի շարք հրատապ հարցերի նկատմամբ:

Սակայն սա արդէն մէկ ուրիշ, առանձին յօդուածի նիւթ է:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- <sup>1</sup> Ծարակնոցում գրանցուած է ընդամէնը երկու նման դէպք. մէկը Ը. դարի կին երգահան Սոսրոփիլուիս Գողթնեցու՝ իր եղբոր՝ Վահան Գողթնեցու նահատակութեանը ձօնուած «Ողբ»ն է կամ «Գովք»ը (որի մասին տե՛ս մեր՝ «Վկայարանութիւն Եւ Ծարականերգութիւն. Հայկական Ութձայն ԴԿ. Դարձուածքի Առեղծուածը», Հայկագեան Հայագիտական Հանդէս, հտ. ԻԳ., 2003, էջ 163-174, տե՛ս նաեւ՝ “Martirologia I Gimnografia: Zagadka “Dartsvatska” Chetvertogo Pobochnogo Glasa Armianskogo Oktoykha” (Մարտիրոսարանութիւն եւ օրհներգութիւն. Հայկական ժամագրքի Դձ-ԴԿ. ձայնի առեղծուածը), Մանրուսում, հտր. Բ., Երեւան, 2005, էջ 39-42, նաեւ՝ “Problema Kanonicheskogo V Armianskom Dukhovnom Pesnetvorchestve” (Կանոնականի խնդիրը հայ հոգևոր երգաստեղծագործութեան մէջ), Kalofonia, Լվովի Աստուածաբանական Ակադեմիայի Հրատարակչութիւն, Լվով, 2005):
- <sup>2</sup> Տե՛ս՝ Յակոբ Անասեան, Հայկական Մատենագիտութիւն, հտ. Ա., Երեւան, Հայկական ՍՍԻ ԳԱ Հրատարակչութիւն, 1959, էջ LXVII:
- <sup>3</sup> Նոյն, էջ LXXI:
- <sup>4</sup> Նոյն, էջ LXXIV:
- <sup>5</sup> Նոյն, էջ LXVIII:
- <sup>6</sup> Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարան, Հին Զեռագրերի Ինստիտուտ (ՄՄ), ձեռ. 5611, ԺԳ. Դար, էջ 111ր:
- <sup>7</sup> Այդ տեսակէտը պաշտպանել են, օրինակ Կարապետ Կոստանեանցը («Հին Յիշատակը», Արարատ, 1897, էջ 289-343), Գրիգոր Յակոբեանը (Ծարականների ժանրը Հայ Միջնադարեան Գրականութեան Մէջ, Ե.ՏԵ. գղ., Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1980, էջ 203) եւ՝ Նիկողայոս Թահմիզեանը (Ներսէս Ծնորհային՝ Երգահան Եւ Երաժիշտ, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1973, էջ 20, նաեւ՝ Ոսկեփորիկ. Հայ Երգի Գոհարներ, Երեւան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1982, էջ 24 եւ 33):
- <sup>8</sup> Տե՛ս մեր՝ «Ո՛վ է՝ Չորս Ըստ Պատկերի Քուլմ՝ Ծարականի Հեղինակը», էջմիածին, 1997, թիւ Դ-Ե., էջ 106-115:
- <sup>9</sup> Տե՛ս, օրինակ, մեր յօդուածը՝ «Եւս Մի Անգամ Ստեփանոս Սիւնեցու Անձի Հարցի Ծուրջ», Պատմաբանասիրական Հանդէս, 2003, N3, էջ 153-160:

- <sup>10</sup> Հայր Միքայէլ Չամչեան, Պատմութիւն Հայոց, Հտր. Բ., Երեւան, 1984, էջ 1032:
- <sup>11</sup> Տե՛ս՝ Մ. Վրդ. Քեչիշեան, Յուշակ Չեղարաց Չմմառու Վանուց, Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1964, էջ 113-115:
- <sup>12</sup> Անասեան, էջ LXVIII:
- <sup>13</sup> Տե՛ս՝ Եակոբոս Տաշեան, Մայր Յուշակ Հայերէն Չեղարաց Մատենադարանի Մխիթարեան, Վիեննա, Հտր. Ա., 1895, էջ 523-524:
- <sup>14</sup> Տե՛ս՝ Տաղասացութիւնք Գրիգորի Մագիստրոսի Պահաւունելոյ, Վենետիկ, 1868, էջ 80-92:
- <sup>15</sup> Այդ մասին տե՛ս մեր յոդուածը՝ «Անիի Երաժշտական Մշակոյթը Եւ Նրա Հետ Կապուած Շարականագիրները», Բազմալէզ, 1995, էջ 209:
- <sup>16</sup> Չամչեան, էջ 926:
- <sup>17</sup> ՄՄ, ձեռ. 8188, 1480 Թ., Թղ. 240ա:
- <sup>18</sup> ՄՄ, ձեռ. 474, 1474 Թ., Թղ. 213ա:
- <sup>19</sup> ՄՄ, ձեռ. 423, 1742 Թ., Թղ. 171բ:
- <sup>20</sup> Գրիգ Երաժշտական, Յորում Պարունակին Հայերէն, Յունարէն Եւ Պարսկերէն Հարցմունք Եւ Պատասխանատւութիւնք Յամառօտարար, տես գրքի երկրորդ մասը՝ «Նուագարան Երաժշտական», Կոստանդնուպօլիս, 1803, էջ 58:
- <sup>21</sup> Նոյն:
- <sup>22</sup> Վերջին երեք շարականները օտուած են անուանական ակրոստիքոսներով: Նշուած հեղինակների մասին տե՛ս մեր՝ «Անիի Երաժշտական Մշակոյթը»:
- <sup>23</sup> Տե՛ս՝ N. Adonts, *Diyonisiu Frakiiskii I Armianskie Tolkovateli* (Դիոնիսիոս Թրակացին եւ Հայ մեկնիչները), Պետրոգրադ, 1915:

GRIGOR MAGISTROS AS AUTHOR OF SHARAKANS AND TAGHS  
(summary)

ANNA AREVSHATIAN

Grigor Magistros (980-1058) was one of the renowned cultural figures of the Bagratid era of Armenia. He was a leading figure of the new trend of thought in the Armenian cultural milieu. Manuscript references confirm that he had commendable knowledge of the religious music that was taught in the monastic schools as well as the popular music that was being developed by minstrels.

It is a significant fact the church canonized several of his sharakans. Indeed Magistros, a lay person, had his name included by the church in the canonical as well as the non-canonical list of *sharakans*, a further proof of his stature as a music figure of the 11<sup>th</sup> century. Strangely, however, no serious attempts have been made by scholars to research and enlist the *sharakans* and *taghs* Magistros had written.

In her article, Arevshatian endeavors to address this issue. She comes out with a list of five *sharakans* and two *taghs*, all authored by Grigor Magistros.

